

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 20 ՕԳՈՍՏ., 1930

ԹԻԻ 14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻԶ ԳԻԾԸ
ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆԻ ՄԵԿՆՈՒՄԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԲՐ.Ի ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՂ
ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՏԵՐ-ԶՈՐ
ԻՆԶ Է ԵԿԵՂԵՑԻՆ
ՀԱՅՐԱԿԱՆ ՍԵՐԸ
ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

ԹՐԳ. Կ. ԺԱՄԿՈԶԵԱՆ
ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՎԵՐ. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ
Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ
ՆՕԹԳՐ. Տ. Ճ. Խ.

ԱՅԼԵԻԱՅԼ

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ
ԼՈՒԹ ԱՂՕԹԲ
ՀԱՒԱՏԲ ԵՒ ՅԱՌԱԶԴԻՄՈՒԹԻՒՆ
ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԵՃ ՀԱՆԷՊ



ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ

Միացեալ Նահանգաց մէջ 1929ի միջոցին 31000 մարդիկ սպաննուած եւ մէկ միլիոն փնասուած են օթոյի արկածներուն պատճառաւ:

Տր. Էքէնըր, որ Կրաֆ Զեփելին օգնականով մինչեւ հիմա 100 000 մզոն ճամբորդած է, կը ծրագրէ Գերմանիոյ Ֆրերտրիստհաֆըն եւ Մ. Նահանգներու Ատլանտեան եզերքին միջեւ օդային փոստ հաստատել: Ամէն հինգ օրը անգամ մը երկու երկիրներէն մէկ մէկ թռչած տար օգնաւոր ճամբայ պիտի ելլեն:

Տր. Պրիւսթըր աշխարհին մէջ առաջին եւ միակ բժիշկն է որ իր հիւանդները այցելելու համար սաւառնակ կը գործածէ: Տանիքները կախուած անկողնի սաւառները հիւանդին տեղը կը ցուցնեն: Ներկայիս երեք սաւառնակ ունի:

Փորձով տեսնուած է որ ճանճերը գունաւոր լոյսերէ չեն ախորժիւր: Այն սենեակները որոնց պատուհանները կարմիր եւ մանաւանդ դեղին ապակիներ ունին ճանճերէ բոլորովին ազատ կը մնան: Բայց դիտելի է որ այս գոյները մարդկային առողջութեան եւ տեսողութեան ալ փնասակար են:

Նօրքիլըն Փեսիփիք Երկաթուղիի գծին վրայ կը գործէ հսկայ վայրաշարժ մը որուն երկայնքն է 125 ոտք, եւ որ կրնայ բլուրն ի վեր քաշել 4000 թօն տարողութեամբ 100 բեռնաւորեալ կառքեր, եւ կ'ապառէ 22 թօն ամուխ մէկ ժամուան մէջ:

Ըստ Փրինսթըն Համալսարանի փրօֆէսորներէն ժ. Սթիւլլըթի, եթէ մէկը ժամը 10 հազար մզոն արագութեամբ սուրացող մեքենայ մը գործածէ կրնայ 13 ամիսէն արեւը հասնիլ, եւ այդ տեղի ահռելի տաքութեան մէջ մէկ վայրկեան ապրիլ կարենալու համար 60 000 անգամ 4000 եռիլիան քիլովատ յոժ

պէտք է պէտք եղած զովութիւնը յառաջ բերելու, եւ ասոր ծախքն է 50 միլիոն տոլար:

Շոգեկառքի արկածներէն խուսափելու համար գիտունները կը հնարեն միջոց մը. վայրաշարժին առջեւ գործիքի մը վրայ լոյսի մը արձակումով վայրաշարժը պիտի դադրի:

Վալիֆօրնիոյ հսկայ ծառերուն երկարակեցութեան զաղտնիքը գտնուած է. անոնց կեղեւները կրակէ չեն ազդուիր, հետեւաբար կ'ապրին 4000—6000 տարի:

Գիտունները կը կարծեն թէ Ամերիկայի եւ Եւրոպայի—Աֆրիկէի միջև տեսնօք ցամաք մը կ'որ, որուն վրայէն մարդիկ եւ կենդանիք մէկ ցամաքէն միւսը անցած պէտք է ըլլան: Խորհելով թէ այս ցամաքը Աղլանդեան ովկիանոսի մէջ լինելոված է զայն փնտալու պիտի ձեռնարկեն:

Անտեռանելի ակնոց. չըջանակաձև ապակիներ ճիշդ կոպերուն տակը պիտի զետեղուին եւ երբեք միայն պիտի հանուին մաքրուելու համար:

USUSUNF

ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ, Հեղինակ Հ. Ֆիլտնէր, Թարգմանիչ Գ. Խայրեան, կը նկարագրէ Հիւկնօնեբու (Ֆրանսայի Բողոքականներու) վիշտերը, կռիւները եւ յաղթանակները: Գին 6 Ֆրանգ, Հասցէ:

Red. "Panpère", c/o H. N. Ghazarossian
7, Rue Papér, MARSEILLE. France,

Ս. ԳՐԳԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Գրեց՝ Վեր. Ս. Ս. Մանուկեան, գինն է Սուրիա՝ 5 զրշ. սուրի, Ֆրանսայ՝ 1 Ֆրանգ, Եգիպտոս՝ 1 զրշ. եգպ., Յունաստան՝ 3 տրախմի, Ամերիկա՝ 5 սէնթ: Դիմել՝ Rev. S. S. Manongian, c/o Eglise Prot. Arm. Alep, Syrie.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՔԴ, 20 ՕԳՈՍՏ., 1930

ԹԻԻ 14

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻՉ ԳԻՄԸ

Հայերու մէջ Աւետարանական շարժումը, որ մօտաւորապէս մէկ դարու պատմութիւն մ'ունի, յաճախ շատերու—թէ՛ աւետարանականի եւ թէ՛ ոչ-աւետարանականի—կողմանէ սխալ հասկցուած եւ սխալ ներկայացուած է: Այս շարժումի հանդէպ նախապաշարեալ մտայնութիւն մը տակաւին զգալի կերպով կը տեսնուի կարգ մը շրջանակներու մէջ: Ունէ արժէք մը իրապէս գնահատել կարենալու համար պէտք է այդ մասին կանխակալ բոլոր կարծիքները մէկ կողմ ձգելով անոր իսկութեան մասին ճշգրիտ, իրական ծանօթութիւն քաղել: Հակառակ պարագային երբ մեր զգացումներուն եւ փայփայած միտումներուն համեմատ գաղափար կազմենք եւ երբ առանց իրականութեան վերահաս ըլլալու տեղեկութիւն քաղենք բնական կերպով մեր դատումներուն եւ գործունէութեան մէջ պիտի սխալինք:

ԺԹ. դարը նշանաւոր շրջան մը պիտի կազմէ հայ կեանքին մէջ: Զարթոնքի շրջանն է ան: Եւրոպայի եւ Ամերիկայի գաղափարի հոսանքներուն ալիքները իրենց ազդեցութիւնը առաջին անգամ զգալի պիտի ընէին առաջաւոր Ասիոյ մէջ, ուր կը գտնուէին Հայութեան հոծ գանգուածները: Արեւմտեան կեանքի, գաղափարներուն, կազմակերպութիւններուն եւ մշակոյթին հետ այս կամ ան կերպով ուշեցած մեր շփումները հայ միտքն ու հոգին գրգռեցին, որ իր կար-

գին սկսաւ ստեղծել նոյն հոսանքները իր հունին մէջ: Արթնցած Հայ հանճարը զգալի ներկայ պայմաններէն սկսաւ նոր կեանք մը կերտել: Այս շրջանին մէջ էր որ գծուեցաւ Թուրքիոյ Հայոց սահմանադրութիւնը, ծաղկեցան կըրթական մեծ վառարանները, կազմուեցան քաղաքական ազատագրական կազմակերպութիւնները, կատարուեցաւ աշխարհաբար լեզուին գրականացումը եւ ստեղծուեցաւ բիւրեղափայլ նոր լեզուով եւ արեւմտեան շունչով ճոխ գրականութիւն մը: Հայ հանճարը իր ներշնչումի կայծերը ստացաւ Արեւմտքէն այս բոլոր մարգերուն մէջ Հայ կեանքը բարեկարգելու համար:

Այս քաղաքական, ազգայնական, կրթական եւ գրական շարժումներէն եւ անոնցմէ բոլորովին տարբեր ուրիշ շարժում մ'ալ սկսաւ Հայերու մէջ: Անշարժութեամբ եւ նպատակով: Ան կը ձգտէր հայ կեանքը բարեկարգել հոգեւորապէս, ինչպէս որ միւսները կը ձգտէին բարեկարգել զայն իրենց որոշ մարդերուն մէջ: Բայց ցաւալի է որ այդ շարժումը յանգեցաւ անջատ մարմինի մը գոյատուրեան, որուն համար միայն Հայ Աւետարանականները եւ միսիոնարները պատասխանատու չէին: Եւ ներկայիս Աւետարանական եկեղեցին գոյութիւն ունի ո՛չ թէ իրեն համար, ոչ թէ ուրիշ մարմիններու, ուրիշ յարանուանութեանց կամ եկեղեցիներու շարքին համալ աւելցուցած ըլլալու համար, այլ անիկայ կայ ու կը մնայ իբր բարեկարգչական հոգեւոր ազգակ մը հայ իրականութեան մէջ: «Հայ աւետարանակա-

նութիւնը ինքը նպատակ մը չէ՝ այլ միջոց մը:» Եւ երբ նպատակը, հայ կրօնական կեանքին բարեկարգումը, իրագործուի, պատճառ մը չի մնար անոր անջատ գոյութեան համար:

Հայ աւետարանական շարժումը իր ուղղութեամբ և նպատակով թէպէտ ժիշտ քարու միւս հոսանքներէն կը տարբերի,

սակայն տնոնց հետ սերտօրէն յարաբերակից կը գտնուի: Ուստի պիտի ջանանք յաջորդ յօդուածներու մէջ պարզել Հայ Աւետարանական շարժումի փոխ յարաբերութիւնը ազգայնական, քաղաքական, կրթական եւ գրական շարժումներուն հետ:

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Վեր. Փափազեան Օգոստոս 20 ին մեկնած պիտի ըլլայ Պէյրութէն լման չորս ամիս անցնելէ վերջ Լիբանանի և Սուրիոյ մէջ: Դամասկոսէն մինչև Ալէք, Թուրքիոյ սահմանին վրայ, Պէյրութէն մինչև Խապուրի ափերը ան պըտըտեցաւ Հայերուն բնական գրեթէ ամէն կարևոր գիւղ և աւան քարոզելով Աւետարանը, խօսելով ամէն տեսակ հաւաքոյթներու մէջ, սրտակցելով անհատական և մտերմական տեսակցութեանց մէջ, խորհրդակցելով պաշտօնական անհատներու և մարմիններու հետ և վերջապէս դասախօսելով աւետարանական քարոզիչներու ամառնային դըպրոցին մէջ: Սուրիա հասած իր առաջին օրէն ան սկսաւ տալ իր հոգիին գանձէն ամէնուն և ամէն տեղ, ուր որ իրեն բաց դուռ մը կար, առանց երբեք մերժելու թէ գիմում իր պատգամը լսելու համար: Ան եկած էր մաշելու և ոպառելու: Հալէպ գտնուած իր վերջին օրերուն հակառակ իր անհանգստութեան ան շարունակեց անընդհատ խօսիլ: Իր վերջին քարոզը տուաւ մինչ 38 աստիճան ջերմութիւն ունէր վրան: Յուլիոսի

երկու վերջին օրերուն անկողնէն ելլելով եկաւ իր վերջին դասախօսութիւնները տալու ամառնային դըպրոցին մէջ: Վեր. Փափազեանի չորս ամսուայ շրջանը Սուրիոյ մէջ լուսատու գիծ մը կը կազմէ, որուն յիշատակը միշտ թարմ պիտի մնայ: Անիկա մեր մէջ ապրեցաւ շեփուրելով իր համերաշխ գործակցութեան պատգամը, ցօղելով պապական հոգին: Բու վրայ միտքարութեան շիթերը, նոր հորիզոններ և վառ տեսիլքներ պարզելով հաւատացեալին առջև, ցնցելով անտարբերութեան նիգեթով տմրափակ սիրտերը, ջամբելով կենաց հացը քաղցած հոգիներուն, ներարկելով հոգեւոր կորով տկարներուն: Եւ դուն արի՛ հոգի, երթա՛ս բարեաւ, մեր աղօթքները միշտ պիտի հետևին քեզի: Դուն որ մեր բոլոր գթութեանց ծանրութեան ճնշումը զգացիր, մեր բոլոր ցաւերուն խորը թափանցեցիր, տառապեալ ցեղիդ մնացորդներուն տանջակից եղար, մեր բոլոր կրօնական հասարակական նուաճումներով մեզի ուրախակից եղար, տա՛ր մեր եզրայրական սիրոյ ողջոյնները մեր անդր աղբաղեան եղբայրներուն, անգամ մը ևս ամրացնելու մեզ իրարու հաղորդող հոգեկան կապերը:

Դիտութեան մեթոտները կը ձախողին երբ կարգը դայ անձնաւորութեան ամենախորունկ գաղտնիքները ըմբռնելու: այս մասին վերջին խօսքը միշտ պէտք է խօսուի մարդկային հոգիին կողմ

մանէ: Հոգին իրեն յատուկ կերպը ունի հոգեւոր իրականութիւնը ճանչնալու, և անով միայն կարելի է անձնական կեանքի կարելիութիւնները որոշել:

ՏՐ. ՈՒՒԼԵՐՄ Է. ՊՐԱՌԻՆ

ՅՕԴՈՒԱՄՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԴԻՆ

Ծ. Խ. Սյսյոզուածաշարքին բոլոր զազա-
փարները անպատճառ խմբագրութեան տե-
սակէտը չեն ցոյցացներ:

1.—Մարդ՝ Աստուծոյ Որդին՝ մարմ-
նով տկար, այլ հոգիով ազատ է: Յիսուս՝
դեռ մանուկ էր՝ երբ Աստուծոյ իր հայրը
կոչեց: Նոյն ատեն հրեաներուն մէջ
մարգարէ մը ելաւ՝ Յովհաննէս անուանով:
Յովհաննէս Աստուծոյ զայրուսքը կը քա-
րոզէր: Ան կ'ըսէր թէ՝ երբ մարդիկ
ստիպուին փոխել իրենց կեանքը, երբ
ստիպուին զիրար հաւատարմ ընդունիլ,
երբ մղուին իրարու չմոռնալ, այլ ընդ-
հակառակը մէկ մէկու ծառային, այն
ատեն Աստուծոյ պիտի հրեւի աշխարհի
վրայ եւ իր թագաւորութիւնը պիտի
հաստատուի: Յիսուս՝ լսելով այս յայ-
տարարութիւնը՝ քաշուեցաւ մարդոցմէ
և գնաց առանձինն տեղեր՝ մտածելու
մարդկային կեանքին նշանակութեան և
բոլոր գոյացութիւններու Սկզբնապատ-
ճառին՝ Աստուծոյ հետ իր ունենալիք
յարաբերութիւններուն վրայ: Եւ Քը-
րիստոս բոլոր գոյացութիւններուն ան-
հուն սկզբնապատճառը հայր կոչեց, մինչ

Ծ. Թ.—Առանց թարգմանական սը-
խաներն նկատի ունենալու՝ քանի որ
լեզուէն աւելի գաղափարին ծառայել
մտածած եմ՝ տպագրութեան կը յանձ-
նեմ Վ. Չէրթքովի այս գրքոյկը, որուն
համար ինք կ'ըսէ. «Ասիկայ ամփոփու-
մըն է Քր. ի Կեանքը եւ Ուսուցումը անուն
գրքի մը, որը իր կարգին խտացումն է
Չորս Աւետարաններու զննարկան և Մեկ-
նարանքիւն անուն գրքին, որը հրատա-
րակուած է իբր Քրիստոս եւ Քրիստոնե-
րիւնք անուն գրքին մէկ հատուածը»:

Հասկնալի կը գառնայ ուրեմն գր-
քոյկին կարեւորութիւնը, երբ աւելցնենք
թէ՝ վերոյիշեալ գրքերուն հեղինակն է
ԼէՅՕ ԹՈՂԱՍԹՈՅ:

Յովհաննէս Աստուծոյ կը կոչէր:

Անպատարին մէջ անսնունդ օրեր ան-
ցընելէ ետք Յիսուս անօթութիւն զգաց:
Այն ատեն ինքն իրենն խորհեցաւ. «Ես
ամենակարող Աստուծոյ զաւակն եմ, ես
կարող եմ իրեն նման ըլլալ, ճիշդ հիմա
ուտել կ'ուզեմ, բայց հաց չկայ. ուրեմն
ես ամենակարող չեմ»: Նոյն ատեն ինք
պատասխանեց. «Ես ինձ համար քարե-
րէն հաց չեմ կրնար շինել, բայց կրնամ
հացի պահանջին յաղթել: Ուրեմն թէ և
մարմնով ամենակարող չեմ, բայց հո-
գիով եմ և կրնամ մարմինը նուաճել:
Ուստի ես ոչ թէ մարմնով, այլ հոգիով
Աստուծոյ որդին եմ»:

Յետոյ աւելցուց. «Եթէ ես հոգիին
զաւակն եմ կրնամ ազատուիլ մարմի-
նէն ու անէանալ», բայց անոր ալ պա-
տասխանեց. «Ես ծնած եմ իբր հոգի,
միւս մէջ մարմնաւորուած: Այս է իմ
հօրս կամքը և ուստի չեմ կրնար Անոր
կամքին դէմ երթալ»:

«Բայց եթէ չես կրնար գոհացնել քու
մարմնական պէտքերդ, եթէ անկարող ես
ազատուիլ քու մարմինէդ» կ'ըսէ ինքնի-
րեն «ուստի պէտք է աշխատիս մարմնոյդ
համար և վայելիս այն բոլոր հաճոյքները,
որ քեզի կը մատուցանէ մարմինը»: Ասոր
ալ կը պատասխանէ, «և ինքզին-
քը անոնցմէ ազատելէ աւելի լաւ կեր-
պով չեմ կրնար գոհացնել իմ պէտքերս:
Իմ կեանքս ամենակարող է, քանի որ իմ
հօրս հոգին է, ուստի մարմնով պէտք է
ծառայեմ հոգիին, իմ հօրս և Կործել մի-
այն Անոր համար»: Եւ գալով այն հա-
մոզումին թէ՝ մարդուն կեանքը միմիայն
հօրը հոգիովն է՝ Յիսուս կը թողու անա-
պատը և կ'սկսի մարդոց բացատրել իր
ուսուցումը: Ան կ'ըսէ թէ՝ հոգին իր մէջ
կը բնակի, թէ այնուհետեւ երկինքը բաց-
ուած է, թէ երկնային զօրութիւնները
մարդոց բերուած են, թէ ազատ և ան-
կաշկանդ կեանք մը սկսած է մարդոց
համար և թէ բոլոր մարդիկ, որքան ալ

դժբաղդ ըլլան մարմնով՝ կարող են երջանիկ ըլլալ հոգիով:

2.—Ուստի մարդիկ պէտք է գործեն հոգիին համարե ոչ թէ մարմինին: Հրեաները՝ ինքզինքնին ուղղափառ դաւանելով՝ կը պաշտէին Աստուած մը, որը Տիեզերքի Արարիչն ու Տէրը կը նկատէին: Իրենց վարդապետութեան համաձայն այս արտաքին (external) Աստուածը ուխտ մ'ըրած է իրենց: Այս ուխտով Ան խոստացած է օգնել Հրեաներուն և իրենք ալ խոստացած են պաշտել Ձինք: Իսկ այն համաձայնութեան վխաւոր պայմանը, կապն է Շարաթը պահելը:

Բայց Յիսուս կ'ըսէ, Շարաթը մարդկային կարգադրութիւն մ'է, քանի որ հոգեւոր կեանքը չատ աւելի արժէքաւոր է, քան կրօնական բոլոր արարողութիւնները: Կրօնի բոլոր արտաքին ձեւերուն նման չաբաթն ալ խաբկանք մը կը պարունակէ: Անկարելի է Շարաթ օրը ոչ մէկ բան ընել: Բարի գործերը պէտք է կատարել ուէ ժամանակ, ուստի եթէ Շարաթը պահելու կարգադրութիւնը կ'արգիլէ բարիք գործելը, ըսել է Շարաթը մեղք մըն է:

Հրեաներուն՝ Աստուծոյ հետ ունեցած ուխտին մէկ ուրիշ պայմանն է, անհաւատներու ընկերակցութենէն խուսափելը: Սակայն Յիսուս կ'ըսէ. «Աստուած իրեն մատուցուած զոհէն աւելի կը պահանջէ որ մարդիկ զիրար սիրեն»:

Ասոնց վրայ կ'աւելցուի լուսացում և մաքրութեան վերաբերեալ օրէնքներու շարք մը որուն համար Յիսուս կ'ըսէ. «Աստուած արտաքին մաքրութենէն աւելի կը պահանջէ իրարու հանդէպ կարեկցութիւն և սէր ունենալ»:

Ան կը ցուցնէ թէ, բոլոր այս արտաքին արարողութիւնները փառասկար և եկեղեցիին կազմութիւնն անգամ չարիք մ'է: Եկեղեցական աւանդութիւնը պատճառ եղաւ սիրոյ ամենակարեւոր գործերու անտեսուելուն — ինչպէս ծնողական սէրը: Բո-

լոր արտաքին արարողութիւններուն, հին օրէնքի սահմանած բոլոր ծիսակատարութիւններուն համար, որոնք իբր քառութեան պայման ընդունուած էին, Յիսուս կ'ըսէ. «Դուրսէն մտած բաները չեն, որ կրնան մարդը պղծել, այլ մարդուն խորհուրդներն ու գործերը»:

Ասկէ ետք Յիսուս զնաց երուսաղէմ՝ սուրբ քաղաքը, մտաւ տաճար, ուր՝ հրեաներու կարծիքով կը բնակէր Աստուած և հոն սորվեցուց թէ, «Աստուծոյ զոհ մատուցանելը անօգուտ է: Մարդը, մարդուն անձը աւելի կարեւոր տաճար մ'է Աստուծոյ, քան նիւթական տաճարը, ուստի ուէ մարդու պարտականութիւնն է սիրել իր նմանը, զրացին և օգնել անոր»:

Աւելի յառաջանալով կ'աւելցնէ. «Մարդիկ Աստուծոյ պաշտամունքին համար մասնաւոր տեղի մը չեն կարօտիր, միայն թէ պէտք է հոգիով ու գործով պաշտեն: Հոգին չի կրնար տեսնուիլ կամ ցոցուիլ: Հոգին աներեւոյթ Հոգիին որդի ըլլալու գիտակցութիւնն է: Տաճար պէտք չէ: Ծջմարիտ տաճարը, սիրով միացած մարդկային ընկերութիւնն է»:

Ու կը շարունակէ. «Բոլոր եկեղեցական արտաքին պաշտամունքները ոչ միայն սխալ և փառասկար են, ինչպէս հրեաներունը, որը սպաննութեան դուռ բացաւ, ծնողներու անտեսումը քաջալերեց, հապա խոտորեցնող են, քանզի մէկը, որ արտաքին ծիսակատարութեան հաւելն է, կը կարծէ թէ ճիշտ կը գործէ և ուստի սիրոյ պահանջած գործերը կատարելէն ազատ է»:

Ու կ'ըսէ. «Միայն այն մարդը բարիին կը ձգտի ու բարին կ'ընէ, որը կ'զգայ իր անձնական պակասութիւնները: Բարիք գործելու համար, մարդ ինքզինք թերի նկատելու է: Բայց արտաքին, ձեռական պաշտամունքը մարդը կ'առաջնորդեն և սակաւ սխալանքի: Ուստի բոլոր արտաքին արարողութիւնները անպէտ են

և պէտք է մէկ կողմ նետուիլ: Մէրէն բղխած գործերը հակառակ են արարողութիւններուն, քանզի անկարելի է այդ միջոցով բարիք գործել: Մարդը հոգիով Աստուծոյ որդին է, ուստի պէտք է հոգիով իր հօրը ծառայէ:»

Թրգմ. Կ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ՏԷՐ-ՉՕՐ

Արդեօք քանի՞ ժամ պէտք եղած է պատրաստելու խնջոյք մը որ տեւած է մէկ ժամ միայն, կամ սարքելու հանդէս մը՝ որ կարճ ժամանակի մը համար հաճոյք պատճառած է հանգիստականներու: Դմանապէս Սուրբոյ և Լիբանանի եկեղեցիները, որոնք ուրախալի առիթը ունեցան Վեր. Փափագեանի քարոզներէն օգտուելու, թերեւս անոր մտիկ ընելու ատեն չկրցան չափել թէ այդ քարոզները որչափ սուղի կը նստին և պիտի նըստին անոր վրայ: Սաչափը շիտակ է թէ ամէն օրն ախորդ օրէն աւելի յոյժութեան նշաններ կը տեսնէին անոր վրայ նոյն իսկ անոնք՝ որ առանց անցիական ու ապագան նկատի առնելու կը դիտէին զայն:

Սակայն ինքը անգիրտանալով այս պարագան, առանց պէտք եղած չափով հանգստանալու, պարտականութիւն ըզգաց այցելել այն տեղերը որոնք իր շատ մը ազգակիցներուն գերեզմանը եղած էին, ի յարգանս անոնց յիշատակին, և իր կարեկցութեան ու սէրը յայտնել ներկայիս յիշեալ տեղերը բնակող Հայերուն: Այսպէս Հալէպէն դէպի արեւելք 200 քիլոմէրը ճամբորդեցինք և մակոյկով Եփրատը անցնելէ հետքը Բազա հասանք, ուր ընկալեալ սովորութեան համեմատ ֆրանսացի հրամանատարի և կարեւոր պաշտօնեաներու հետ տեսակցեցանք, և ապա նոյն օրը Տէր Ղեւոնդ Ներսէսեանի ընկերակցութեամբ 45 քիլոմէրը ևս ճամբորդելով իրիկուան մօտ թեղ Սեմէն հասանք:

Տեղս կրնայ Հայերու կողմանէ անպատի մէջ շինուած ուղարկներէն մէկը նկատուիլ, որ Միս Եփէի կողմանէ Ազգերու Դաշնակցութիւն անուանով և Արաբ շէյխի մը հետ համաձայնութեամբ շինուած ագարակ մ'է: Մօտաւորապէս 250 Հայեր, որոնց մեծամասնութիւնը Ուրֆացիներէ և Կարմուշցիներէ կը բաղկանայ, արարական ոճով սրածայր գմբեթաձև հողաչէն հիւղակներու մէջ կը բնակին: Համաձայնութեան պայմանները Հայերուն համար ո՛չ չահաւոր են և ո՛չ ալ ապագայ տէէ յոյս մը կամ երաշխիք կը ներշնչեն: Հողը հայերուն չի պատկանիր, այլ անոնք կ'աշխատին և արդիւնքը այսինչ համեմատութեամբ շէյխի և իրենց միջև կը բաժնեն: Շէյխը ազատութիւն ունի զանոնք իր ուզած օրը հողէն վտարելու. մանաւանդ արաբական միջցեղային կռիւներու ծագման պարագային անոնք անպայման պիտի ստիպուին անոր համար պատերազմելու: Այսպիսի փորձութիւն մը կրնայ ապագային ուէէ ատեն պատահիլ, ինչպէս որ մօտիկ անցեալին մէջ պատահած էր: Իսկ այս չի կրնար Հայերուն համար օգտակար ըլլալ: Այս տարի մարտիները բոլոր հունձքը փճացուցած ըլլալով Հայերը յուսահատութեան և կարօտութեան մատնուած են: Հակառակ այս բոլորին պէտք է որ անոնք հիւսիսէր ըլլան, և իրենք ապահովութիւն կը վայելեն անցուդարձով Անէզէ Արաբներու հանդէպ իրենց ցոյց տուած բարեկամութեան շնորհիւ: Մեր այցելած երկու ագարակներուն մէջ ալ սիրով ընդունեցին մեզ: Շատ հաճելի և օգտակար տեսակցութիւն մը ունեցանք իրիկունը հաւաքուած բարեկամներու հետ, զորոնք ջանացինք քաջալերել ե. միսիթարիլ: Կէս գիշերին մօտ բակը բացօթեայ տեղ մը պառկեցանք: Հետեւեալ օրը Աւետիս աղա Շէշոեանի և Խաչեր աղա Մըխսի Աւետիսեանի մեր

շնորհակալութիւնը յայտնեցինք և Րազ-
զա վերադարձանք:

Րազգայի մէջ 300 Հայեր կան որոնց
հովիւն է Տէր Աւետիս Հայր Ներսէսեան.
ունին եկեղեցի մը և գարոց մը և ժրա-
ջան վարժապետ մը: Երկու անգամ
պաշտօն կատարեցինք գարոցի շէնքը
խոնուած երկսեռ ժողովուրդին: Շատ
հաճելի էր տեսնել թէ կարգ մը հար-
ցու մներ պատրաստած էին կարծես Վեր.
Փափազեանը քննելու դիտաւորու-
թամբ. ասիկա կը ցուցնէ թէ անոնք
մտքով արթուն էին: Տեսակցելու առիթը
ունեցանք Արաքներու հետ ամուս-
նացած շատ մը Հայուհիներու հետ, ո-
րոնցմէ շատեր իրենց գաւակները Հայ-
կական վարժարան կը ղրկեն և երբեմն
իրենք ալ ժամ կուգան: Մեծապէս չը-
ներհակալ եղանք Տէր Աւետիս Հօրմէն
և իր ժողովուրդէն, որոնցմէ բաժնուե-
լով Եփրատը կրկին անցանք և ճամբան
շարունակեցինք: Տասն և հինգ տարի-
ներ առաջ անթիւ Հայեր, այրեր և կի-
ներ, մեծ ու պղտիկ, հիւանդ և յոգնած
ըլլալով, ոստիկան գինւորներու ան-
գթութեան առարկայ, արեւի կիզիչ տա-
քութեան ենթակայ, աւաղախառն տաք
հոփին մէջ, ջուրին թէպէտ մօտ սակայն
խմելու չարտօնուած, իրենց ձագուկնե-
րը թափելով և իրենք թափուելով այս
ճամբաներէն անցած էին և երկինքը
հասած էին: Իսկ մենք օթոյի մէջ,
հանդարտ և ապահով կերպով կը ճամ-
բորդէինք: Մեր մտքերը դադարեցնող
հարցը սա էր. «Ինչո՞ւ անոնց այնպէս
իսկ մեզի այսպէս անցնելով չճակեցաւ...»
Մեր ցիղին գաւակները մեր իջեւանած
տեղերը անձանթ գերիվանդներու մէջ
անձայն կը պառկէին: այդ տեղերէն
իւրաքանչիւրին մէջ կը տեսնուէին մի-
քանի արաբական հիւղակներ, աւերակ-
ներու բնակիչ բուհերու նման: Սէպտա-
յի մէջ այցելեցինք այն խանը ուր Վեր.
Տէր Պօղոսեան և Պատ. Թ. Նաճարեան

վերջին անգամ ապահովութեամբ բնա-
կած էին: Ապա մեր ճամբան շարունակե-
լով նոյնօրը 200 քիլոմէթր տեղ ճամբոր-
դելէ ետքը Տէր-Զօր հասանք և ատամնա-
բոյժ Տիար Գրիգոր Հերանոսեանի տու-
նը հիւր ընկալուեցանք: Մօտաւորապէս
400 Հայեր կ'ապրին հոս: Տէր Գրիգոր
հայր Սարգիսեան յաջորդ օրը, որ Կիրակի
էր, Վեր. Մ. Կ. Փափազեանը հրաւիրեց
խօսելու եկեղեցիի մէջ: Մեզի հաճոյք
պատճառեց իրիկուան դպրոցական հան-
դէսէն վերջ խօսիլ, շատ մը տուններ այ-
ցելի, և սակայն մինչև հոս տեսնուած
տեսարանները, լուծած սարսազդեցիկ
պատմութիւնները, անապատի հրատո-
չոր տաքութիւնը, մօեղի և լուի նման
արարածներու միջոցաւ խանգարուած
գիշերային հանգիստը Վեր. Փափազեանի
ոյժը սպառած էին և իր արիւնին վա-
րակուած մալարիայի մանրէներուն գոր-
ծունէութեան առիթ տուած էին: Եւ
հակառակ մեր տանտիրոջ բոլոր ջանքե-
րուն անոր գէմքը թօշնած և ան իր խօ-
սելու տրամադրութիւնն իսկ կորոնցու-
ցած էր: Երկուշաբթի՝ Պաղտատ գացող
Կաթողիկ վարդապետի մը և Մուսուլցի
Ս. Գրքի գործակալի մը ընկերակցու-
թեամբ Եփրատը անցանք և ջարդերուն
տեղի ունեցած շրջանը հասանք: Ճիշտ
գետին եզերքը մեռած Հայերու չորցած
ոսկորներուն կոյտին լուսանկարը ա-
ռինք: Մեզի խմացուցին թէ երկու տա-
լի առաջ պատահող անխելքաց հեղեղ
մը հազարաւոր գանկերու մէկ մասը քըշ-
ած տարած է և մէկ մասն ալ աւաղի
տակ թաղած է:

Այրող արեւին տակ ճամբան շարու-
նակեցինք, Մարութէ և Սուարէ անցնե-
լով ճիշդ կէսօրը Ծհssasիէ հասանք. ուր
միշտ ժպտալէմ և կարեկից սիրտ ունե-
ցող և միայն արաբերէն խօսող հայ կնոջ
մը տունը հիւրընկալուեցանք: Նէ ջա-
նաց իր հիւրասիրական մեծարանքովը,
իր առատ թանոց, կարագի մէջ թափ-

ուած հաւելիթով և թարմ հացով մեղ պատուելի: Բայց մենք զիտէինք թէ ո՛ւր կը նստէինք: մենք Հայերու մեծագոյն սպանդանոցը, Շէտտատիյէ, կը գտնուէինք: Տէր Զօրի քաղաքապետին մեր մէկ բարեկամին ըսածին համեմատ «տոմարի մէջ արձանագրուած 120,000 մարդիկ Տէր Զօրէն» գէպի այս շրջանը քշուած, և ճիշդ մեր նստած տունը շրջապատող բլուրներու մէջտեղ սպաննուելէ վերջ իրենց վրան քարիւղ թափուած և այրուած, քարայրները և ցորենի (հողի մէջ փորուած) ամբարները լեցնելէ վերջ մնացորդը խողխողուելով եփրատի մէջ նետուած են: Ասեւանգուող աղջիկները հիմա զաւակներու տէր եղած, իրենց ինքնութիւնն ու ազգութիւնը կորսնցուցած, իրեն՝ կրօնքն ու լեզուն մոռցած արաբական տարազի և շարժումների տակ մեզի անճանաչելի դարձած են: Այնթապցի երիտասարդ մը, որ գալով ճիշդ մեր զիմացը նստած էր, կատարեալ ճշգրտահոլութեամբ ասեւին իր նախնիները կը կատարէր, և գէպի իր տղիին ծոցը դառնալու առաջարկներուն հեգնանքի խնդուքներով կը պաշտասխանէր:

(Շարունակելի)

Ո. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԻՆՉ Է ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՍՏՈՒԾՈՑ՝ ՄԱՐԴՈՒ ՄԷՁ

ՄԱՐՄՆԱՑՈՒՄԸ

ԵԿԵՂԵՑԻ՝ Հին Յունարէն «Էքլիզիա» բառն է որ ժողովուրդ կամ ժողովատեղի կը նշանակէ: Առաքելոց ժամանակը կը կը գործածէին այդ «Էքլիզիա» ն: Այժմ Բրիտանական Եկեղեցին կը նշանակէ միայն:

Ինչո՞ւ Պէկնիպոսի րահնը ծնաւ Եկեղեցին, առաջ եկեղեցի չկա՞ր, քանի որ Բրիտանոս անկէ առաջ արդէն ժողոված էր 12 ը,

և 120 ին վերջին օրհնութիւնը տուաւ ու համարաձաւ: Գործ. 7. 38 ի մէջ կը յիշուի Անապատի ժողովքը, և Մատթ. 18. 17 ի մէջ եկեղեցի մը որ Պէնտէկոստէէն առաջ էր, ու ինչպէս ըսինք վերը, կը գործածուէր: Հոս՝ Եկեղեցին Հին սովորական իմաստէն, գործածական ձեւէն բոլորովին տարբեր և նոր խնայւմ կ'ստանայ: Իրենց ծանօթ հին «Էքլիզիա» ն նոր առումով հինին շարունակութիւնը չէ, սակայն իրենց վարժուած հին բառը մնաց գործածական: Նմանապէս «Միքսոքիւն» բառը անոնց ծանօթ հին գործածական բառ մըն էր, սակայն յանուն ՀՕՐ ու ՈՐԴԻՈՅ և ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ սկսուած մկրտութիւնը հին Յովհաննէս Մկրտիչի մկրտութեան շարունակութիւնը չէր, այլ նոր սկզբնաւորութիւն մը: Ինչպէս նաև Յիսուս Հիմ ու Նորը իրարմէ զանազանելու համար ըսած էր աշակերտներուն. «Ինչո՞ւ որ իրաւ Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք ասկէ շատ օրեր չանցած՝ Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք:» Գործ. 1. 5: Մկրտութիւնը բոլորովին բարձրացաւ ունուիրականացաւ. նոյնպէս եղաւ ԵԿԵՂԵՑԻ՝ բառը: Բայց աստի՛ այսուհետեւ Եկեղեցին պիտի ըլլար բոլորովին նոր սրբազործուածներուն, Սուրբ Հոգիով մկրտուածներուն խումբը: Ասոր համար Յիսուս անոնց հետ գտնուած ատենը կ'ապսպրէր անոնց որ Երուսաղէմէն չհեռանան հապա սպասեն ՀՕՐը խոստմունքին, Սբ. Հոգիին (Գործ. 1. 4):

ԱՌԱՋԻՆ ԱԴԱՄ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԱԴԱՄԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Առաջին ստեղծագործութեան ժամանակ Աստուած նախ մարդը չինեց հողէն: Անկէ վերջը անոր մէջը փչեց կենդանութեան շունչ, հոգի: Եւ մարդը կենդանի հոգի եղաւ, (Ծննդ. 2. 7): Նոյնպէս Երկրորդ ստեղծագործութեան ատեն Յիսուս իրեն համար մարմին մը պատրաստ

սեղու աշխատեցաւ շատ դարերէ ի վեր, մանաւանդ վերջին 33 տարիներու միջոցին, այնպիսի մարմին մը որուն մէջ կարենայ թափել (infuse) իր կեանքը, և այդ կեանքէն կարենայ փառաւորել և հաղորդուիլ այլոյ (transmissible): Յիսուս իր գործը լմնցուցած էր, մարմինը չինած էր, աշակերտները երեսադէմի մէջ միաբան մէկտեղ էին, սակայն բոլորին չինած հողէ ամանը կրակի փռուին մէջ թրծելով այլափոխուելու էր, կրակէ ծնունդ մը ևս պէտք էր: Սբ. Հոգին եկաւ, փչեց անոնց՝ որոնք... կերպարանափոխուեցան ու սկսան շարժիլ իբր նոր արարածներ:

Երկրորդ Ազամ, հոգեւոր մարդը, աստուածային ոգին ու հոգին բնորոշեց իր մարմնոյն մէջ: Եկեղեցիին տրուեցաւ Ս. Հոգին, որպէսզի աշխարհը կարող ըլլայ ընդունիլ եկեղեցիէն Հոգւոյն պատուները: Բնական մարդը այժմ եղաւ հոգեւոր մարդ. նոր ծնած մարդ:

ՊԵՆՏԵԿՈՍՏԷ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԾԸՆԸՆԴԵԱՆ ՕՐՆ Է, ԿԱՄ ՀԻՆԻՆ ՆՈՐՈԳՈՒՄԸ ԿԱՄ ԱՊՐԵՆՈՒ ՍԿՍԱԾ ՕՐՆ Է:

Եկեղեցին ծնաւ իբր պատանի ոչ թէ իբր երախայ, ինչպէս առաջին ԱՅԱՄ իբր մարդ շինուեցաւ: Ազամ բնական ապացոյցն է կենդանութեան:

ՊԵՆՏԵԿՈՍՏԷ՝ Մարդուն հոգեւոր պատմութեան մէջ զօրութեան, նոր դարագլխու մը սկզբնաւորութիւնն է:

ԵԿԵՂԵՑԻՆ ԲՈՒՆ ԱՆՈՒՆԸ — ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ ընդհանրապէս ան Աւեստանի մեջ գործածուած են, և նպաստելը կը մասնանշեն Աստուծոյ քաղաւորութիւնը, սուրբերուն քաղաքակրթները (Եփես. 2. 19): Քրիստոսի կենդանի մարմինը, որուն գլուխն է Քրիստոս ինքը, (Եփես. 5. 25: Կող. 1. 24): Սուրբ Հոգւոյն անաւոր, (Եբր. 2. 21): Սուրբ փառք, նոր Երուսաղիմ (Յայտ. 21. 2): Աստուծոյ ընթանիքը (Եփես. 2. 19):

Այս և այլ տարբեր անուններով եկեղեցին կը մատնանշուի:

ԼՈՒՍԱՒՈՐԵԱ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ձի հասեալ է լոյս քո, զարգարեա զամուրս քո և փառք ի վերայ քո Ծագեցի:

Օրհնութեամբ, սաղմոսիւք քեզ վայելէ Աստուած օրհնութիւն ի Սիրովէ, և քեզ մատուցին աղօթք յերեսադէմ:

Գովեա, Երեսադէմ զՏէր, և օրհնա զԱստուած քո նոր ժողովուրդ, զըշխոյ դուստր Սիրովի:

Փիլասկիա. Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ Մարտ. 12. 1930

ՀԱՅՐԱԿԱՆ ՍԷՐԸ

Ինչպէս իմ գութը մեղաց անհամար
Կ' ապրիմ խղերու հեշտ կեանքը յաւառ,

Քամեցի բաժակն կեանքին անառակ,
Խոզարած մոլոր օրգւոյն հանգունակ:

Հոգիս մոլորեալ կը ճենճերի յար
Հուրքովը կրից լպիրշ բոցավառ.

Կամայ մերկացայ Շնորհքէն հօթնարփ-
հան,

Տանջանքի կեանքն է բաժինս յաւիտ-
հան:

* *

Բայց հետապնդող կայ Սէր մ' անսահ-
ման,

Հայր մը բազմագութ Հայր մը անման,
Որ, «ինչպէս յանձնեմ, քեզ ինչպէս ես տամ»

Ո՞վ եփրեմ սիրտս խոռվի յարաժամ,

Մարգարէին կը պատգամէ բերնով:

Կը վերածնի իմ հոգիս, խոռվ

Ձաղրելի գութէն հի'ն հի'ն մեղքերու,

Սիրով հայրական Սիրով հոգածու:

Լառնափա

Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՍՏՐՈՒ ՆՕԹԵՐ

(Վեր. Մ. Կ. Փափագեանի)

ՀԱՅԵՐ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՄԷՁ*

«Ոյն ստե՛ն կի՛նը ձգեց սափորը ու ֆաղաֆ գնաց:» Յովն. 4. 28:

«Վասնզի ինձի մեծ ու արդիւնատուր դուռ մը բացուած է, ու շատ համարաւորողներ կան:» Ա. Կորն. 16. 9:

Վեր. Փափագեան վերոգրեալ հատուածներու ընթերցումէն վերջ ըսաւ. «Քրիստոսնեան դուռ կը տեսնէ հոն ուր հակառակորդներ կան:» Ապա իր հոս զալու բաղձանքին և ծրագրին չիրականանալը, Աստուծոյ և մարդու ծրագրի ներուճ իրարու չյարմարիլը յայտնելէ վերջ մասնաւոր գոհունակութիւն յայտնեց որ վերջապէս Աստուած առիթը չընորհեց, զուր բացաւ, հոս զալու համար, որուն յաջողութիւնը Աստուծոյ կողմէ ըլլալը խոստովանելով Անոր առջև խոնարհելու պէտքը շեշտեց, ու ապա շարունակեց:—

Մ. Նահանգաց մէջ հարիւր հազար Հայեր կան, որոնք ցրուած են զրեթէ ամէն տեղ մասնաւոր հիւսիսային և արեւելիկան մասերուն մէջ: Հիմա տարածման հոսանքը գէպի արեւմուտք ուղղուած է: Մ. Նահանգաց գոհերը նոր զաղթականութեան առջև փակուած են, և յոյս չկայ որ անոնք բացուին:

Հայ Առաք. համայնքը երկու առաջնորդութիւններ ունի այս երկրին մէջ, մէկը Նիւ Եօրքի և միւսը Գալիֆօրնիոյ մէջ: Մայր Եկեղեցին շատ մը կազմա-

կերպութիւններ, գեղեցիկ շէնքեր ունի, որոնցմէ ոմանք ինք շինել տուած է իսկ ուրիշները ծախու առած է:

Հայ Աւետ. համայնքը, որու թիւն է 10 000, 36 քաղաքներու մէջ 40 եկեղեցիներ և բեմեր ունի, որոնցմէ ոմանք պաշտօնական կազմակերպութիւն մ'ունին իսկ ուրիշներ անկազմակերպ ժողովուրդներ են, ոմանք ինքնապահ են իսկ ուրիշներ ներքին Աւետչ. Ընկերութենէն օգնութիւն կ'առնեն: Եկեղեցիներէն ոմանք Երիցական յարանուանութեան կը պատկանին: Հայ Երիցական եկեղեցիներ կան Ֆրէզնոյի, Եդեմի, Քինկսլիի մէջ: Ուէսթ Նիւ Եօրքի մէջ ալ գեղեցիկ և զօրաւոր Հայ Երիցական Եկեղեցի մը կայ: Ֆրիատէլֆիայի մէջ կայ Հայ Մեթոտական եկեղեցի մը որուն հովիւն է Վեր. Աբրահամ Յարութիւնեան: Ասկէ զատ փոքր Հայ Մեթոտական եկեղեցի մ'ալ կայ: Մնացեալ բոլոր եկեղեցիները ժողովական են:

Ս. Ֆրանսիագոյի ժողովական եկեղեցիին հովիւն է Վեր. Քարթոզեան, որ բնիկ Սերաստացի է: Ժողովական Եկեղեցիներ ունինք Պըրքլիի, Օդէնտի, Ֆատուլըրի, Փարլիէրի, Քինկսլիի մէջ: Լոս Անկէլէսի մէջ ունինք երկու ժողովական եկեղեցիներ, որոնցմէ մէկուն— Գեթսեմանիի— նոր հովիւն է Վեր. Բիւզանդ Ս. Լեւոնեան*: Ֆրէզնոյի Հայ ժողովական Եկեղեցիին հովիւն է ձեպի ներկայ խօսողը: Տիթլոյթի մէջ, ուր կ'ըսուի թէ 15 հազար Հայեր կան, ժողովական Եկեղեցիին հովիւն է Վեր. Ռշտունի, Մարգուանի Անաթոլիա Գուլէճի ուսումնաւարտներէն: Փրավիտէնսի մէջ ունինք զօրաւոր Եկեղեցի մը,

* Վեր. Մ. Կ. Փափագեան Ապրիլ 23 ին Սուրբոյ Աւետ. Միութեան տարեկան ժողովին առաջին նիստին մէջ առտուան պաշտամունքին խօսեցաւ Մ. Նահանգաց մէջ Հայերու մասնաւորապէս արեւմտականներու կրօնական վիճակին մասին, որուն ամփոփումըն է վերի յօդուածը: Ծ. ՆԹ.

* Հալէպ եկած նամակէ մը ուրախութեամբ կ'իմանանք որ Վեր. Լեւոնեանի ժողովուրդը իր սիրելի նոր հովիւին նուիրած է օթօ մը, սեղանատան և հիւրանոցի կահաւարման բոլոր առարկաները: Ծ. ՆԹ.

որուն հովիւն է Վեր. Տէփոյեան:

Պոսթոնի մէջ կան երկու ժողովական եկեղեցիներ, մէկը հայախօս, որուն հովիւն է Վեր. Ս. Հալլաճեան, և երկրորդը թրքախօս, որուն հովիւն է Պատ. Պաղտիկեան: Ընդհանրապէս նահանգը ամէնէն շատ թիւով եկեղեցիներ ունի: Հայ Աւետ. համայնքը այս երկրին մէջ կազմած է երկու Միութիւններ, մէկը Արեւելեան՝ որուն նախագահն է Վեր. Տէփոյեան, և միւսը Արեւմտեան՝ որուն նախագահն է Վեր. Ս. Բէճէպեան:

Զեզի ծանօթ անձերէն Տր. Երուանդ Հատիտեան կը գործէ՝ թէ՛ Հարթֆըրտ համալսարանի մէջ դասախօսելով և թէ՛ Աւետ. համայնքի մը քարոզչելով: Վեր. Փրոֆ. Յ. Գ. Գրիգորեան բառին ամէն առումով արթուն, գործօն և հաւատարիմ աշխատաւոր մըն է:

Մեր եկեղեցիներուն մէջ կուսակցական խնդիրներ չունինք, բայց լեզուի հարցը ունինք: Ժողովուրդը ընդհանրապէս հայախօս է: Քսաներկու տարուան միջոցին 22 տաճկերէն քարոզ չըտուի: Բոլորովին թրքախօս երկու եկեղեցիներ կան, Մատիս և Կիլիկիա ժողովական եկեղեցիները. միւսները կամ բոլորովին հայախօս կամ կէս հայախօս կէս թրքախօս են: Բայց հայերէն լեզուն անդերէնի առջև տեղի կուտայ: Երիտասարդները անգլիախօս են, իսկ ծնողները՝ հայախօս. այս պատճառաւ դժուարութիւններ կը ծագին ընտանիքներու և եկեղեցիներու մէջ: Հետեալ բար մեր կրօնական պաշտօնները մասամբ անգլերէն լեզուով կը կատարենք:

Մեր եկեղեցիներուն մէջ կարեւոր հարցերէն երկուքը ասոնք են. — 1. Կրօնական անտարբերութիւն կայ մեր համայնքներուն մէջ. իցիւ թէ հակառակութիւն ըլլար, հակառակութիւնը անտարբերութիւնէն աւելի օգտակար է, քրիստոնէութիւնը հալածանքի տակ ապրիլ աւելի դիւրին է քան թէ հան-

դարտութեան մէջ: 2. Մ. Նահանգաց մէջ Հայ Աւետ. եկեղեցիին դաշտը փոքր է, հեւաբար հոգեւոր գործի համար պատրաստ թեկնածուներ չունինք:

Անցեալ տարի աւետարանչական պտոյտ մը ունեցայ Միացեալ Նահանգաց մէջ և 40 եկեղեցիներու մէջ պաշտօններ կատարեցի: Այս շրջանի միջոցին, որ ինծի համար շնորհք մը եղաւ, սա քոչալերական կէտերը ուշադրութիւնս գրաւեցին. — 1. Հովիւներու և հոգեւոր գործիչներու մէջ աւետարանական գիտակցութիւնը աւելցած է: 2. Հայ Առաք. եկեղեցիին հանգէպ ջերմ վերաբերում մը գիտելի է, որ պէտք է աւելի զօրանայ: 3. Աւետարանչական հոգին աւելցած է: Մեր ազգային քաղաքական բոլոր գործունէութիւնը ձախողած և մեր բոլոր յոյսերը իղբերեւելած են: Եւ հիմա մեր հովիւներուն մէջ էական կէտերու մասին արթնութիւն մը սկսած է ծայր տալ: Հիմա կը խորհինք թէ պէտք է աւետարանչական ըլլալ աւետարանական կարեւոր միալու համար:

Ընդհ. բապէս Միացեալ Նահանգաց մասին սա կրնամ ըսել: Այս երկրին մէջ ամէնէն շատ պաշտօններէն և Ամերիկացիներու հետ շատ շփում ունեցողներէն մէկը ըլլալով այնպէս կը խորհիմ թէ իրաց ընթացքը նոր ուղղութեան մը սկսած է հետեւիլ, որ է ղէպի հոգեւորութիւն: Ժամացոյցի ճօճանակը ղէպի այս կողմ դարձած է: Անցեալ տարի Նիւ Եորք էի, տառը հազարաւոր միլիոն տոլարներ պարունակող դրամատուններու պողոտային վրայ Երրորդութիւն եկեղեցիին մէջ կէսօր ատեն ժողովուրդը խոնոտած էր կրօնական պաշտօնին մասնակցելու համար: Նոյնպէս St. John the Divine մայր եկեղեցիին մէջ ժողովուրդը խոնոտած էր կէսօրէ ետքը ժամը մէկին կատարուող արթնութեան ժողովին ներկայ ըլլալու համար: Ուրիշ մէկ թատրոնի մէջ, ճիշտ կէսօր ատեն, Տր.

Սթանլի ձօնդ, որ հուշակաւոր եղաւ The Christ of Indian Road անուն գրքով, կը խօսէր բազմամբոյս ժողովուրդին: Հունձքը ճերմկած է արդէն: Հաւատքի աչքերը կրնան տեսնել ինչ որ մարմնաւոր աչքերը չեն կրնար: Դուռը բացուեցաւ քանզի հակառակութիւնը աւելցաւ: Մենք պէտք ունինք հոգեւոր թափանցող տեսողութեան, որ կըրնայ յառաջ գալ Քրիստոսի մօտ երթալով ոչթէ գործի մասին խորհելով կամ պատասխանատուութիւն ունենալով: (Շար.)

Նօթագրեց
Տ. Ճ. Խ.

ԱՅԼԵՒԱՅԼ

ՀՈԳԵԿԱԼՈՒՍՏԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒՄԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Հարաւային Հնդկաստանի մէջ քրիստոնեայ Հնդկիկներու առաջնորդութեամբ հոգեւոր շարժում մը սկսած է որ «կըրնայ բոլոր Քրիստոնեայ եկեղեցիին դաս տալ» ինչպէս որ կ'ըսէ Եպիսկոպոս Պ. Թ. Պըրտլի: Այս բնիկ քրիստոնեաները զիւղէ զիւղ կը շրջին և հոգեւոր ժողովներ կը սարքեն, ուր ժողովուրդը միատեղ կուգայ ազօթելու և սպասելու մինչև որ անոնք վերէն ոյժը ստանան: Անոնք ոչ թէ ոյժ մը, այլ ՈՅԺԸ կը փնտռեն, որուն մասին մեր Տէրը իր աշակերտներուն ըսաւ: Ժողովները օրերով կը շարունակեն այս մէկ յայտնի նպատակով: Անոնք պարզապէս Աստուծոյ առջև կ'սպասեն և Անոր խոստումին իրազօրծումը կը պահանջեն: ... և նշանակելի իրողութիւնը սա է որ այդ ոյժը կուգայ: Ս. Հոգին անոնց վրայ կ'իջնէ... Այս դեղջուկ գործիչներու մեծագոյն առաջնորդը, որ այս շարժումը սկսաւ, ո՛չ գոլէճական և ո՛չ ալ աստուածաբանական ուսում ունի, բայց Հոգիով լեցուած մարդ մըն է: Եւ վրձաւը փոխուի այն զիւղերու մէջ ուր այս

ժողովները կը սարքուին: Եւ թէ՛ աշխարհականները թէ՛ եկեղեցականները հաւասարապէս կ'օգտուին այս հոգեզալստեան օրհնութենէն:»

ՀՈՒՌ ԱՂՕԹԻԸ

Յայտնի միսթիք հեղինակ Տր. Րուֆըս Մ. ձօնդ կը գրէ:—

«Շատ մը մարդիկ կարծած են, և տակաւին ոմանք կը կարծեն, թէ պաշտամունքի գլխաւոր օգուտն է խաղաղ մտածումի առիթ մ'ունենալ: Այնպէս կ'ենթադրուի թէ կեանքի ժխորէն այս հեռացումը լաւագոյնս կրնայ գործածուիլ առանց ունէ խանգարումի մտածելով՝ հոգեւոր նիւթի մը վրայ:»

«Առաւ պաշտամունքի մէջ փորձառու եղողի մը, սակայն, տեսակէտը, առնուազն գաղափարականը այս չէ: Հոգեւորապէս լաւ կըթուած և հասունցած մարդիկ սորված են թէ փորձառութեան այնպիսի աստիճաններ կան որ խորհելէն աւելի խոր և խոկումէն աւելի կենարար են: Երբեմն մտքի հարցերէն հեռանալ այնչա՛փ կարեւոր է որքան որ է գործի լուծէն և ամբողջի ճշուումէն խոյս տալ: Մեր բոլորին մէջ խորութիւններ կան որոնք մեր գաղափարներէն շատ աւելի խոր են: Իրականին մէջ ենթաշերտ մը կայ որ մեր բոլոր գաղափարներուն և նըպատակներուն մայր հողը կը կազմէ: Մեր կեանքի այս ենթաշերտը սնուցանել շատ աւելի կարեւոր է քան մի քանի մտածումի փշուրներ յափշտակել կամ կազմակերպել: Վերջապէս մեր էութեան այս հիմնական խաւը կենսաւորելու և ոյժով ողողելու կերպը գտնել կեանքի մեծ գաղտնիքներէն մէկը երեւան հանել է: Եւ ահա մեզմէ ոմանց ճիշդ այս կը պատահի երբ Աստուածային հոսանքներու հետ մօտէն յարաբերութեան խորհուրդը և լուծութիւնը կը վայելեն, և հաւաքական պաշտամունքի լուծութիւնը կ'ապրին:»

ՀԱՒԱՏՔ ԵՒ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ

Մարդկային յառաջդիմութեան բոլոր քայլերը առնուած են անոնց կողմէ որ կը գործեն իբր թէ անտեսանելին կը տեսնեն: Ասոնք տեսիլքի տէր մարդիկ կը կոչուին, մարդիկ՝ որոնք իրենց չըտեսած բաներուն տակաւին չհասած նըշանակէտներուն գոյութեան համոզուած են: Ասոր օրինակները շատ են թէ գիտական և թէ գործնական կեանքի մէջ: Մարդիկ տարիներով կը նուիրուին գտնելու բան մը որուն գոյութիւնը չեն կրնար ապացուցանել:

Վեր. Ա. Ու. Սուօն իր մէկ հրատարակուած քարոզին մէջ այս գաղափարը կը կիրարկէ մեր անմահութեան հաւատքին վրայ ու կ'ըսէ. «Գիտական աշխարհի մէջ սկիզբիները գրեթէ միշտ ամօթի մատնուած են իսկ հաւատքի տէր մարդիկ արդարացուցած իրենց՝ հաւատքը: Հաւատք ունեցող մարդերը համարձակած են տակաւին չտեսնուած բաներու մասին խօսիլ: Անոնք պնդած են թէ մանիչակագոյնէն անդին լոյսի ճառագայթներ կան: Ասիկա անկարելի է ըսած են սկիզբիները: Լուսապատկերի մէջ եթէ մանիչակագոյնէն անդին գոյն մը գոյ ըլլար անպատճառ պիտի տեսնէինք զայն: Բայց փորձերը ապացուցին անդամանիչակագոյն ճառագայթներու գոյութիւնը, որոնք թէպէտ մինչև հիմա անտեսանելի մնացած են: Ասեն մ'առաջ Բրիտանական Գիտական Ընկերակցութեան առջև Ռէմսէյ անուն բնագէտ մը իր ճառին սկսաւ սա բառերով. «Այսօր պիտի խօսիմ նոր կազմի մը մասին: Քիչ վերջը պիտի բացատրեմ անոր մասնաւոր յատկութիւնները, բայց չիտակ չէ սկիզբէն ձեզի չյայտնել անոր էն նշանակելի յատկութիւնը, որ սա է թէ տակաւին ան չէ գտնուած:» Եթէ գիտնականները կազմի մը գոյութիւնը կ'ենթադրեն բնական երեւոյթ-

ներու բացատրութեան իբր անհրաժեշտ միջոց մը, մենք ալ կրնանք այս կեանքէն անդին կեանքի մը գոյութիւնը ենթադրել երեւոյթներէն անդին կեցող իրերը բացատրելու համար:

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ, ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Երկու դրացի ազարակապաններու միջև երկար տտենէ ի վեր վէճ մը կար ցանկի մը տեղին մասին և նոյն խակ ասոր համար զատարանի ալ դիմած էին: Վերջապէս անոնցմէ մէկը իր կալուածը ծախեց: Ազարակին նոր աէրը օր մը ասոր դրացիին այցելութիւնը ընդունեց: Սա վերջինը քիչ ետքը իր նոր դրացիին յայտնեց ցանկի վէճը: «Լաւ,» ըսաւ նոր կալուածատէրը, «ոսկի՞ր պէտք է քաշել կը խորհի՞ր ցանկը:» «Մէկ ոտնաչափ աւելի հող պէտք է տրուի ինծի» ըսաւ հին դրացին: Նորեկը անմիջապէս հողին վրայ դիմ մը երկաքեց, որ ներկայ ցանկէն երկու ոտնաչափ զէպի ներս էր իր հողին վրայ: և «Ահա ճիշդ այս գծին վրայ շինէ ցանկը,» ըսաւ: «Բայց» բողոքեց հին դրացին, «ասիկա իմ պահանջէս մէկ ոտնաչափ աւելի է:» «Գիտեմ,» ըսաւ նորեկը, «ես կ'ուզեմ դրացիին հետ խաղաղ ապրիլ քան թէ հողի շերտ մը աւելի ունենալ:» «Այս չ'ըլլար,» ըսաւ ազարակապանը, «այս ցանկը իր տեղէն երբեք չպիտի շարժի:» Եւ չջարժեցաւ ալ, և այս կերպով լուծուեցաւ ցանկի վէճը:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՅՈՒԼԻՍ 23-30 ԻՆԿԱՏԱՐՈՒԵՑԱԼ ՍՈՒՐԻՈՅ և ԼԻՐԱՆԱՆԻ ՀԱՅ. ԱՆԿԱ. հովիւներու, քարոզիչներու ամառնային զըպրոցը մասնակցութեամբ 25 գործիչներու: Դասախօսեցին Վեր. Մ. Փափազեան քարոզախօսութեան, եկեղեցավարութեան մասին, Տր. Ծ. Մէրիլ՝ քրիստո-

նէական փորձառութեան հոգեբանական մի քանի հարցերուն մասին, շեշտելով թէ կարեւորագոյն ազդակը միտքը չէ այլ կամքը, և թէ մեր գիրքն է որ պիտի որոշէ մեր փորձառութեան արժէքը, թէ այդ գիրքը պէտք է ըլլայ ուրախացութիւն ճշմարտութեան հանդէպ և հնազանդութիւն անոր, փրոֆ. Լ. Լեւոնեան՝ հոգեբար կրօնքի մասին երեմիա մարգարէի և Պօղոս առաքելի կեանքերուն վերլուծմամբ, և մասամբ դըպշեղով կրօնքի մէջ հեղինակութեան հարցին, իսկ Վեր. Հէնրի Հ. Րիկը՝ մտաւորական պաշարի կարեւորութեան մասին կրօնական կեանքի մէջ, գիտութեան և կեանքի յարաբերութեան և բարձրագոյն քննադատութեան մասին: Ամէն մէկ դասախօսութենէն վերջ ազատ խորհրդակցութեան և հարցումներու առիթ տրուեցաւ: Բոլոր դասախօսներն ալ յուզեցին խոր, այժմէական, կենսական հարցեր որոնց մասին երբեմն տաք խորհրդակցութիւններ, կարծիքի լուրջ փոխանակութիւններ եղանոյն իսկ դասի պահերէն դուրս: Այս զպրօքը մեծապէս օգտակար եղաւ ներկաները համընթաց քայլի մէջ զննելով այսօրուան կեանքի հետ, գրգռելով հոգիները և միտքերը վերստին խորհելու շատ մը կենսական հարցերը, նոր գաղափարներ ներկայացնելով, և այլն:

ՀԱԼԷՊԻ ՆԱԽԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան Յուլիս 29ին քաղաքս ժամանեց և Տիար Ա. Մագլումեանի կողմէ հիւրասիրուեցաւ: Շահէ Վրդ. իբր տեսուչ պիտի պաշտօնավարէ Անթիլիասի Ընծայարան վարժապետանոցին մէջ, որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեան տակ պիտի գտնուի:

Գեր. Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան Օգոս. 17ին Անթիլիաս մեկնած է: Գեր. հայրը Հալէպ գտնուած պահուն նոր բացուելիք Ընծայարանին համար ռեսանդ-

ներ արձանագրեց, որուն առաւելագոյն թիւը պիտի ըլլայ յիսուն: Միայն Հալէպի մէջ մօտաւորապէս 65 պատանիներ և երիտառարգներ գումում ըրած էին: Իպրոցին ուսուցչական մարմինը առայժմ պիտի բաղկանայ չորս հոգիներէ, որ են Գեր. Տ. Բարգէն Եպիս. Կիլիկիեան, Գեր. Տ. Ծ. Վրդ. Գասպարեան (ընդհանուր տեսուչ), Տիար Լ. Զէնեան, և Ամերիկացի մը: Ռեսուսանական ծրագիրը պիտի պարունակէ վեց տարուայ դասընթացքը, առաջին երեքը նախապատրաստական և վերջին երեքը աստուածաբանական: Վեցամեայ նախակրթարանի ուսուսնաւարտներ պիտի կրնան նախապատրաստական բաժնին մէջ ընդունուիլ:

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ Օգոստոսի առաջին շաբաթը անհանգըստութեամբ անցնելէ և որոշ չափով մը կազդուրուելէ վերջ Հալէպէն շոգեկառքով Շիրման (Լիբանան) մեկնեցաւ, ուր իր պարտաւած մարմինը հանգստացնելէ ետքը պիտի մեկնի Ամերիկա: Հալէպէն մեկնումի օրը պաշտօնական անձերէ զատ մեծ թիւով բարեկամներ և համակիրներ կայարան շտապած էին իրենց ողջերթի մաղթանքը ընելու: Այս բոլորը Վեր. Փափազեանի շուրջը հաւաքուած մտիկ ըրին անոր հրաժեշտի վերջին յուզիչ բառերուն: «Ձեմ գիտեր», ըսաւ ան տուկաւին քիչ մը դողդոջ ձայնով մը, «թէ ես որքան կրցայ օգտակար ըլլալ, բայց սա ստոյգ կերպով գիտեմ որ ես շատ օգտուեցայ, շատ բաներ սորվեցայ ձեզմէ, ասիկա ինծի օրհնութիւն մը եղաւ: Ինչ մը անհանգիստ եղայ, և լաւ որ եղայ, այս կերպով գոյլն չափով ցեղիս խեղճներուն տառապանքին մասնակից եղայ:» Ու հրաժեշտի ողջոյնները փոխանակուելէ վերջ ան մեկնեցաւ տանելով իրեն հետ իր ընդհուպ վերադարձին մասին բոլորին բաղձանքը:

Կ. ՊՈԼՍՈՅ Պատրիարքարանը ներկայիս զբաղած է պատուիրակներու ընտրութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու համար: Էջմիածնի գերագոյն խորհուրդը Վ. Կ. Սահակ Կաթողիկոսէն խնդրած է Սուրբոյ թեմէն երկու պատուիրակներու որոշումը:

ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ Հայ Աւետ. Միութեան ԻԲ. տարեկան ժողովը այս տարի նորէն կատարուած է Լոս Անձելէսի Գեթսեմանի Հայ Ժող. եկեղեցիին մէջ, Յունիս 6—8 ին: Միութեան յայտագրին ճակատը գրուած է իբրեւ նշանաբան Ղուկ. 11. 13 տունը— Հայրը երկինքէն Ս. Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն— որ պաշտամունքի առաջնորդներուն ընդհանուր նիւթը դարձած է: Ուղերձներ եղած են Պատ. Տիգրան Ենովքեանի կողմէ Ս. Գրքին Ուսումն ու Ուսուցումը, Վեր. Վարդան Ամիրխանեանէ՝ Հայ Նահատակներու Տուած Աւանդը, Վեր. Վարդան Ամիրխանեանէ՝ Մեր Երիտասարդութիւնը, Վեր. Կ. Մ. Մանավեանէ Տէրունական Պաշտամունքի Ճոխացումը, Վեր. Արփիար Վարդանեանէ՝ Հոգեւոր Կեանքի Զօրացման Ազդակներ, և Վեր. Յ. Ա. Գարթուզեանէ՝ Եկեղեցիներու Տկարացման Ներքին Պատճառները նիւթերուն մասին: Միութեան տարեկան քարոզը տրուած է նախագահին, Վեր. Ս. Մ. Բէճէպեանի կողմէ: Ժողովին վերջին նիստը յատկացուած է Աւետարանչականի: Աւետարանչականի դաշտին մասին լուրեր և աւետիսներ տրուած են Տէր և Տիկ. Կէրթմէնեանի և Տէր Տիկ. Սարկաւազի կողմէ, որոնք անցեալ տարի այցելու էին նաև Սուրբան իրենց պտոյտի միջոցին: Այս առթիւ հանգանակութիւն կատարուած և յաջորդ տարուան ծրագիրը բացատրուած է Պատ. Խազոյեանի կողմէ:

ՀԱՆԴՈՒՑԵԱԼ Պողոս Փաշա Նուպարի զաւակներէն Կոմուհի Տ'արսքոթ, Առաքել, Զարեհ և Վահրամ Պէյերը իրենց հօր մահուան առթիւ 1000 աւան անգլ. ոսկիէն 4000 անգլ. ոսկի նուիրած են Բարեգործականի, որուն վարչութիւնը զանոնք բարերար անգամի ցանկին մէջ նշանակած է: Բաց աստի Նուպարեանի ընտանիքը տուած է 250,000 ֆր. Նուպարաշէնի և 183,000 ֆր. զանազան նպատակներու համար:

ՕՐ. ԻՐԻՆԷ Գալլպէհան արժանացած է Հռոմի Բ. մրցանակին նկարչութեան մէջ:

Տիկ. ԻՍԿՈՒՀԻ Մինասի Ֆրանսերէն լեզուով շարք մը բանաստեղծութիւնները զոգասանքով յիշուած են Բադի—Բրես թերթին մէջ:

ՅՈՒԼԻՍԻ ՍԿԻՋԲԸ Անգլիա կատարուած ժողովական եկեղեցիի միջազգային մեծ համագումարին մասնակցած է Ուստրի (Մ. Նահանգներ) Հայ Մարտիրոսաց Եկեղեցւոյ հովիւ Վեր. Գ. Պետրոսեան:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ Մեծ Ժողովը որոշած է Մ. Քէմալի նուիրել ոսկիէ յուշատախտակ մը, որուն մէջը զետեղուած պիտի ըլլայ թրքական նոր այրուրները: Այս գեղարուեստական գործը վստահուած է ոսկերիչ Լեւոն Մազլըմեանի:

ԿԸ ՅԱԻՆՔ ՈՐ ՏԻԱՐ ԱժՈՒՐ Լեւոնեանի աջ կոնքին ոսկորը կտրուած է ձիւն անկումի մը պատճառաւ, կը դարմանուի Աթուրեան հիւանդանոցի մէջ: Տիար Լեւոնեանի վիճակը աւելի բարդ վիճակ մը ստացած է թոքատապի մը երևոյթով: Ուրախ ենք որ հիւանդութեան վտանգաւոր փուլը անցած է:

صاحب الامتياز و مدير المسئول
فيس قريبت هاروتونيان